ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ
17.07.26թ., ժամը՝ 15:00-16:15

Խորհրդի անցկացման վայրը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Նիստը նախագահում էր ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը:

Նիստին մասնակցում էին ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի անդամներ՝

Նունե Սարուխանյանը	-	«Գյուղատնտեսության աջակցության Կանաչ արահետ» ՀԿ
Սոնա Թելունցը	-	«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն/CARD» հիմնադրամ
Նունե Մանուկյանը	-	«Արենի փառատոն հիմնադրամ»
Մեխակ Ապրեսյանը	-	«Տուրիզմի հայկական ֆեդերացիա»
Մերուժան Զադայանը		«Անասնաբույժներ առանց սահմանների» հասարակական կազմակերպություն
Էլինա Մակարյանը	-	«Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
Հայկ Մինասյանը	-	«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն
Մարիամ Մանուկյանը	-	«ՀՀ միջազգային գործարար կապերի աջակցման խորհուրդ»
Ավագ Հարությունյանը	-	«Գինու ազգային կենտրոն» հասարակական կազմակերպություն

Փոխարինում էին՝

Արսեն Ղազարյանին՝ *Ներսես Կարամանուկյանը*	-	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն»
Վահագն Համբարձումյանին՝ *Հասմիկ Բարխուդարյանը*	-	«Հայաստանի գործատուների հանրապետական միություն»
Մարատ Ատովմյանին՝ *Մարիաննա Ավագյանը*	-	«Իրավաբանների հայկական ասոցիացիա»
Սարգիս Կարապետյանին՝ *Էդիտա Ղազարյանը*	-	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ
Հերմինե Թովմասյանին՝ *Հասմիկ Միրզոյանը*	-	«Հայաստանի հաշվապահների ասոցիացիա» ՀԿ

Բացակայում էին՝

Կարեն Զաքարյանը	-	«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա
Հակոբ Ավագյանը	-	«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա»
Արմեն Ավետիսյանը	-	«Տոհմային կենդանիների անասնաբույծների ասոցիացիա»
Սեդրակ Մամուլյանը	-	«Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» ՀԿ
Վահան Հարությունյանը	-	«Հայաստանի շինարարների միություն» ՀԿ
Վարդան Ջհանյանը	-	«Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիա» ՀԿ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից նիստին մասնակցում էին՝

Լիլիթ Շաբոյանը	-	Նախարարի մամուլի քարտուղար, ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի համակարգող պաշտոնատար անձ
Անժելինա Չիլինգարյանը	-	Լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի պատասխանատու պաշտոնատար անձ
Մարիաննա Խաչատրյանը	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության վարչություն պետի պարտականություններ կատարող

Օրակարգում ընդգրկված էր 3 հարց՝

1. Պետական աջակցության ծրագրեր՝ արտահանմանն ուղղված ծրագրերի լավարկում
2. ՀՀ-ում մասնավոր անասնաբուժական ծառայությունների և անասնաբուժական դեղամիջոցների շրջանառության համակարգի զարգացման, կարգավորման և պետական աջակցության մեխանիզմների ներդրման անհրաժեշտության մասին հարց (Խորհրդի անդամ Մ.Զաղայանի առաջարկությամբ)
3. Հարցուպատասխան/քննարկում

Նիստն անցկացվել է <u>ուղիղ հեռարձակմամբ</u>՝ գործող կարգի համաձայն:

Ողջունելով խորհրդի անդամներին, ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի նախագահ Գևորգ Պապոյանը ներկայացրել է օրակարգում ընդգրկված հարցերը:

Օրակարգի հաստատումից հետո նախարարն ***օրակարգի 1-ին հարցի*** շրջանակում անդրադարձել է իրականացվող պետական աջակցության ծրագրերին, մասնավորապես արտահանմանն ուղղված ծրագրերի լավարկմանը և նշել, որ աջակցությունը կլինի շարունակական՝ հետագայում ենթարկվելով որոշակի փոփոխությունների:

Նախարարը նաև ավելացրել է, որ աշխատանքներ են իրականացնում տարբեր կազմակերպությունների հետ կարգո փոխադրումների աջակցության ծրագիր իրականացնելու համար:

Ամփոփելով իր խոսքը՝ նախարարը նշել է, որ վստահ է, որ խորհրդի անդամները տեղեկացված են նախարարության կողմից իրականացվող աջակցության ծրագրերից, որոնք միտված են արտահանմանը և ավելացրել, որ ակնկալում է լսել կարծիքներ և առաջարկներ՝ թե ինչքանո՞վ կարելի է ավելի արդյունավետ դարձնել գործող ծրագրերը. ի՞նչ կարելի է ավելացնել, ի՞ նչը հանել և այլն:

Խորհրդի անդամներից 1-ին հարցի վերաբերյալ արտահայտվեցին **Մարիամ Մանուկյանը** («ՀՀ միջազգային գործարար կապերի աջակցման խորհուրդ»), **Սոնա Թելունցը** («Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն/CARD» հիմնադրամ), **Հասմիկ Բարխուդարյանը** («Հայաստանի գործատուների հանրապետական միություն»), **Էլինա Մակարյանը** («Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում»), **Հայկ Մինասյանը** («Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն), **Ավագ Հարությունյանը** («Գինու ազգային կենտրոն» ՀԿ):

Խորհրդի անդամները ներկայացրել են իրենց կազմակերպությունների կողմից արտահանման ուղղությամբ իրականացվող աշխատանքները և արդյունքները: Մարիամ Մանուկյանը նշել է, որ իրենց կողմից Լեհաստանի «Lidl» ցանցերի հետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել, որոնց ադյունքում հայկական կողմին են փոխանցվել ապրանքների ցանկեր և ներկայումս աշխատանքներ են իրականացվում արտադրողների հետ արտահանումներ կազմակերպելու ուղղությամբ:

Ներկայացնելով իրենց կողմից իրականացված աշխատանքները՝ Էլինա Մակարյանը կարևորել է ԱՄՆ-ՀՀ միջև կրկնակի հարկման բացառման պայմանագրի հետ կապված հարցերը, նշել, որ տևական ժամանակ աշխատանքներ են տարվում այս ուղղությամբ, որպեսզի հարցը լուծվի, ինչը ևս մեծ խթան կլինի:

Խորհրդի անդամներն առանձնացրել են որոշակի խնդիրներ, ներկայացրել նաև առաջարկներ՝ պետական օժանդակությամբ հարցերը լուծելու համար: Մասնավորապես՝ առանձնացվել են լոգիստիկ ճանապարհային խնդիրները՝ օդային և ցամանքային, սերտիֆիկացման խնդիրները, երբ արտադրողները դեռևս պատրաստ չեն ԵՄ սերտիֆիկացման, և շատ դեպքերում պատվերի առկայության դեպքում չեն գտնվում այնպիսի արտադրողներ, որոնք կարող են անհրաժեշտ

քանակով և որակով արտադրանք տալ, տեղեկատվության պակասի, բանակցությունների վարման, կարողությունների զարգացման և իրազեկման խնդիրը: Խնդիրներից նշվել է նաև ալկոհոլի տարանցման համար որպես բանկային երաշխիք միայն ԿԲ բանկի երաշխիքի ընդունումը, ինչը ևս խնդիրներ է առաջացնում: Առաջարկվել է դիտարկել արտահանման աջակցման առանձին կառույցի ստեղծման հնարավորությունը, որը կարձագանքի արտահանողների բոլոր հարցերին և կուղղորդի վերջիններիս, միասնական բրենդի ստեղծման հարցը:

Սոնա Թելունցը ներկայացրել է այլ երկրների փորձը և առաջարկել նաև դիտարկել Հայաստանում ևս մեծ սորտավորման կայանների ստեղծման հնարավորությունը, որտեղ ապրանքները կսորտավորվեն, կլվացվեն, կփաթեթավորվեն և կարտահանվեն: Այս կոնտեքստում կարևորվել է նաև հավաքման-մթերման կենտրոնների հետ համագործակցությունը, ինչը հատկապես օգտակար կլինի ՓՄՁ ներկայացուցիչների համար:

Շնորհակալություն հայտնելով առաջարկների համար նախարարը նշել է, որ դրանց մի մասն արդեն կառավարության օրակարգի մաս են, կամ արդեն արվում են կամ նախատեսում են անել, բայց բոլոր կքննարկվեն: Նա նաև ավելացրել է, որ միասնական բրենդի ստեղծումը կառավարության առաջնահերթություններից է:

Օրակարգի 2-րդ հարցը՝ «ՀՀ-ում մասնավոր անասնաբուժական ծառայությունների և անասնաբուժական դեղամիջոցների շրջանառության համակարգի զարգացման, կարգավորման և պետական աջակցության մեխանիզմների ներդրման անհրաժեշտության մասին», ներկայացրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի անդամ, «Անասնաբույժներ առանց սահմանների» հասարակական կազմակերպության նախագահ Մերուժան Զադայանը:

Անդրադառնալով հարցին՝ նա ներկայացրել է մասնավոր անասնաբուժական ծառայությունների զարգացման պետական քաղաքականության ձևավորման անհրաժեշտությունը և առաջարկել քննարկել ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների, պետական աջակցության հնարավոր մեխանիզմների, ինչպես նաև անասնաբուժական դեղամիջոցների շրջանառության համակարգի կատարելագործման հարցերը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության վարչության պետ Մարիաննա Խաչատրյանը ներկայացրել է նախարարության դիրքորոշումը և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Հարցի վերաբերյալ իրենց տեսակետն են արտահայտել նիստի մասնակիցները՝ ներկայացնելով առաջարկներ, որոնք վերաբերել են կենդանիների համար ապահովագրության համակարգի ներդրմանը, ծառայությունների թվայնացմանը, կենդանիների հաշվառմանը, այգիների վրա կենդանիների հարձակումների կանխմանը, մարզերում գործող լաբորատորիաներին առավել մեծ աջակցության տրամադրմանը:

Օրակարգի 3-րդ հարցի՝ հարցուպատասխանի շրջանակում ծավալվել է քննարկում:

Հասմիկ Բարխուդարյանը ուշադրություն է հրավիրել այն հարցին, որ ռեստորանները, ժամը 00:00-ից հետո իրավունք չունեն ՀԴՄ կնքելու կամ պետք է քաղաքապետարանին 1մլն դրամ վճարեն և խնդրեն, հնարավորության դեպքում, վերանայել հարցը: Առաջարկվել է նաև քննարկել ալկոհոլային խմիչքների համար տարբեր տուրքերի սահմանման հնարավորությունը՝ ըստ տոկոսայնության:

Մեխակ Ապրեսյանը, Նունե Մանուկյանը, Էդիտա Ղազարյանն անդրադարձել են փառատոնների կազմակերպմանը և առաջարկներ ներկայացրել: Նաև առաջարկվել է վերանայել գովազդի համար վճարվող տուրքերի չափը, արդեն կայացած փառատոնների մասով, որոնք արդեն ճանաչված են, աջակցության ծրագրերն իրականացվեն արտոնյալ կարգով:

Որոշվեց՝

- Օրակարգերի ձևավորելու համարնախապես ներկայացնել առաջարկներ, նիստի ընթացքում ևս առաջարկներ ներկայացնել գրավոր ձևաչափով,
- Լոկալ խնդիրներին լուծումներ տալու համար ստեղծել առանձին, փոքր աշխատանքային խմբեր, առաջարկները կարող են հետագայում քննարկվել նաև համապատասխան աշխատանքային ձևաչափով:

Նախարարը վերահաստատեց նախարարության պատրաստակամությունը՝ համագործակցելու խորհրդի անդամների հետ, քննարկելու ներկայացված առաջարկները և համատեղ մշակելու այնպիսի լուծումներ, որոնք կնպաստեն երկրի տնտեսական զարգացմանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ Գևորգ Պապոյան

Համակարգող անձ՝ Լիլիթ Շաբոյան

Պատասխանատու անձ՝ Անժելինա Չիլինգարյան